1	70-71	Շանթի կյանքը և գործը
1	73-74	«Հին աստվածներ» դրաման
1	74-76	«Հին աստվածներ» դրամայի գլխավոր կերպարները
<b>Թեմա</b> <b>Միասք</b> <b>Մեծարենց</b>	<p><b>Նպատակներ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>•Ամրապնդել Մեծարենցի կյանքի ու ստեղծագործության վերաբերյալ ունեցած գիտելիքը:</li> <li>• Նպաստել ընթերցածի վերաբերյալ կարծիք արտահայտելու և հիմնավորելու կարողության զարգացմանը:</li> <li>•Զարգացնել բանավոր խոսքը:</li> </ul> <p><b>Վերջնարդյունքներ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>•Ներկայացնել Մեծարենցի կյանքն ու ստեղծագործությունն ընդհանուր գծերով:</li> <li>•Կարծիք արտահայտել ընդգրկված ստեղծագործությունների վերաբերյալ:</li> <li>•Արտահայտել մտքերը գրագետ բառապաշարով:</li> </ul>	
<b>Ժամ</b>	<b>Էջ</b>	<b>Դաս</b>
1	78-79	ՄիասքՄեծարենցի կյանքը և գործը
1	79-81	Ստեղծ.: Անձնական ցավի նվագներ
1	84-88	Միրո երգը: Բնության երգը
1	88-90	Մարդասիրությունը: Արվեստը
1		<b>Ամփոփիչ աշխատանք</b>
<b>ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿ</b>		
<b>Թեմա</b>	<b>Նպատակներ</b>	
<b>Միամանթո</b>	<ul style="list-style-type: none"> <li>•Ծանոթացնել Միամանթոյի կյանքին ու գործունեությանը:</li> <li>•Նպաստել ընթերցածի վերաբերյալ կարծիք արտահայտելու և հիմնավորելու կարողության զարգացմանը:</li> <li>•Զարգացնել բանավոր խոսքը:</li> </ul>	

	<b>Վերջնարդյունքեր</b>	
	<ul style="list-style-type: none"> <li>•Ներկայացնել Սիամանթոյի կյանքն ու ստեղծագործությունն ընդհանուր գծերով:</li> <li>•Կարծիք արտահայտել ընդգրկված ստեղծագործությունների, վերաբերյալ:</li> <li>•Արտահայտել մտքերը գրագետ բառապաշարով:</li> </ul>	
<b>Ժամ</b>	<b>Էջ</b>	<b>Դաս</b>
1	94-97	Սիամանթոյի կյանքը և ստեղծ.
1	97-101	«Հայորդիներ»,«Հոգեվարքի և հույսի ջահեր» ժողովածուները
1	102	«Կարմիր լուրեր բարեկամես»
<b>Թեմա</b>	<b>Նպատակներ</b>	
<b>Դանիել Վարուժան</b>	<ul style="list-style-type: none"> <li>•Ամրապնդել Վարուժանի կյանքի ու ստեղծագործության վերաբերյալ ունեցած գիտելիքը:</li> <li>• Նպաստել ընթերցածի վերաբերյալ կարծիք արտահայտելու և հիմնավորելու կարողության զարգացմանը:</li> <li>•Զարգացնել բանավոր խոսքը:</li> </ul>	
	<b>Վերջնարդյունքներ</b>	
	<ul style="list-style-type: none"> <li>•Ներկայացնել Վարուժանի կյանքն ու ստեղծագործությունն ընդհանուր գծերով:</li> <li>•Կարծիք արտահայտել ընդգրկված ստեղծագործությունների, կերպարների գործողությունների վերաբերյալ:</li> <li>•Արտահայտել մտքերը գրագետ բառապաշարով:</li> </ul>	
<b>Ժամ</b>	<b>Էջ</b>	<b>Դաս</b>
1	108-109	Դանիել Վարուժան. կյանքը
1	109-113	Ստեղծ.:«Սարսուռներ», «Յեղին սիրտը»
1	113-114	«Հեթանոս երգեր»
1	114-120	«Հարճը» պոեմը
1		
1	121	«Հացին երգը»
1		<b>Թեմատիկ գրավոր աշխատանք 1</b>

Թեմա		
<b>Վահան Տերյան</b>	<b>Նպատակներ</b> <ul style="list-style-type: none"> <li>• Ամրապնդել Տերյանի կյանքի ու ստեղծագործության վերաբերյալ ունեցած գիտելիքը:</li> <li>• Նպաստել ընթերցածի վերաբերյալ կարծիք արտահայտելու և հիմնավորելու կարողության զարգացմանը:</li> <li>• Չարգացնել բանավոր խոսքը:</li> </ul> <b>Վերջնարդյունքներ</b> <ul style="list-style-type: none"> <li>• Ներկայացնել Տերյանի կյանքն ու ստեղծագործությունն ընդհանուր գծերով:</li> <li>• Կարծիք արտահայտել ընդգրկված ստեղծագործությունների, վերաբերյալ:</li> <li>• Արտահայտել մտքերը գրագետ բառապաշարով:</li> </ul>	
Ժամ	Էջ	Դաս
1	125-127	Վահան Տերյանի կյանքը և ստեղծ.
	128-130	«Մթնշաղի անուրջներ»
	130-131	«Գիշեր և հուշեր», «Ոսկի հեքիաթ», «Ոսկե շղթա»
	131-134	«Երկիր Նաիրի»
Թեմա	<b>Նպատակներ</b> <ul style="list-style-type: none"> <li>• Ծանոթացնել նորագույն շրջանի գրականության առաջացման պայմաններին համառոտ գծերով:</li> </ul> <b>Վերջնարդյունքներ</b> <ul style="list-style-type: none"> <li>• Իմանալ նորագույն շրջանի գրականության ձևավորման մասին:</li> </ul>	
<b>Նորագույն շրջանի հայ գրականություն</b>		
Ժամ	Էջ	Դաս
1	139-146	Նորագույն շրջանի հայ գրականություն
Թեմա	<b>Նպատակներ</b> <ul style="list-style-type: none"> <li>• Ամրապնդել Չարենցի կյանքի ու ստեղծագործության վերաբերյալ ունեցած գիտելիքը:</li> <li>• Նպաստել ընթերցածի վերաբերյալ կարծիք արտահայտելու և հիմնավորելու կարողության զարգացմանը:</li> </ul>	
<b>Եղիշե Չարենց</b>		

	<ul style="list-style-type: none"> <li>•Զարգացնել բանավոր խոսքը:</li> </ul> <p><b>Վերջնարդյուքներ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>•Ներկայացնել Չարենցի կյանքն ու ստեղծագործությունն ընդհանուր գծերով:</li> <li>•Կարծիք արտահայտել ընդգրկված ստեղծագործությունների, կերպարների գործողությունների վերաբերյալ:</li> <li>•Արտահայտել մտքերը գրագետ բառապաշարով:</li> </ul>	
Ժամ	Էջ	Դաս
1	147-150	Ե. Չարենց. Կյանքը և գործը
1	157-162	«Դանթեական առասպել» պոեմը
1	161	«Վահագն» պոեմը
1	169-170	«Մահվան տեսիլ» բանաստեղծությունը
1	163-168	«Սումա»,«Ամբոխները խելագարված» պոեմները
1	151-153	Մարդու և բանաստեղծի ճակատագիրը
1	153-154	«Հեռացումի խոսքեր»բանաստեղծությունը
1	155-172	«Տաղ անձնական» բանաստեղծությունը, «Տաղարան» շարքը
1	174-175	«Գիրք ճանապարհի» ժողովածուն
1	175-177	«Անվերնագիր» բանաստեղծությունը
1		<b>Թեմատիկ գրավոր աշխատանք 2</b>
Թեմա	<b>Նպատակներ</b>	
<b>Դերենիկ Դեմիրճյան</b>	<ul style="list-style-type: none"> <li>•Ամրապնդել Դեմիրճյանի կյանքի ու ստեղծագործության վերաբերյալ ունեցած գիտելիքը:</li> <li>•Նպաստել ընթերցածի վերաբերյալ կարծիք արտահայտելու և հիմնավորելու կարողության զարգացմանը:</li> <li>•Զարգացնել բանավոր խոսքը:</li> </ul> <p><b>Վերջնարդյուքներ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>•Ներկայացնել Դեմիրճյանի կյանքն ու ստեղծագործությունն ընդհանուր գծերով:</li> <li>•Կարծիք արտահայտել ընդգրկված ստեղծագործությունների, կերպարների գործողությունների վերաբերյալ:</li> </ul>	

	•Արտահայտել մտքերը գրագետ բառապաշարով:	
Ժամ	Էջ	Դաս
1	181-183	Դերենիկ Դեմիրճյանի կյանքը և գործը
1	183-185	«Վարդանանքի» ստեղծման պատմական նախադրյալները
1	185-187	«Վարդանանքի» բովանդակությունը
1	187-188	Վեպի կերպարները. Վարդան
1	188-189	Վասակի կերպարը
1	189-193	Հազկերտիկերպարը: Պատմավեպի ժանրային առանձնահատկությունները
Թեմա	<b>Նպատակներ</b>	
<b>Ակսել Բակունց</b>	<ul style="list-style-type: none"> <li>•Ամրապնդել Բակունցի կյանքի ու ստեղծագործության վերաբերյալ ունեցած գիտելիքը:</li> <li>•Նպաստել ընթերցածի վերաբերյալ կարծիք արտահայտելու և հիմնավորելու կարողության զարգացմանը:</li> <li>•Զարգացնել բանավոր խոսքը:</li> </ul> <p><b>Վերջնարդյունքներ</b></p> <ul style="list-style-type: none"> <li>•Ներկայացնել Բակունցի կյանքն ու ստեղծագործությունն ընդհանուր գծերով:</li> <li>•Կարծիք արտահայտել ընդգրկված ստեղծագործությունների, կերպարների գործողությունների վերաբերյալ:</li> <li>•Արտահայտել մտքերը գրագետ բառապաշարով:</li> </ul>	
Ժամ	Էջ	Դաս
1	195-197	Ակսել Բակունց. կյանքը և գործը
1	197-200	«Ալպիական մանուշակ»
1	201-202	«Ծիրանի փողը»
1	202-203	«Միքիավ»
1		Տարեվերջյան ամփոփում
1		<b>Ամփոփիչ աշխատանք</b>



Դաս 1. Նար-Դոսի կյանքն ու ստեղծագործությունը

[Թեմատիկ պլանավորում](#)

Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների  
կատարումը ստուգելու համար

1. Որտե՞ղ է ծնվել Նար-Դոսը:
2. Ի՞նչ գիտեք գրողի ծննդավայրի մասին:

ա.Փորձե՛ք հիշել ուրիշ հայ գրողների, որոնք ապրել են այդ քաղաքում:

3. Ի՞նչ ստեղծագործություններ եք հիշում Նար - Դոսից:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Նար-Դոսի ծննդավայրը:
2. Գրողի անուն-ազգանունը:
3. Որևէ ստեղծագործության վերնագիր:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. Հիշել Նար-Դոսի ծննդավայրը:
2. Նշել գրողի անուն-ազգանունը :
3. Մտապահել մեկ կամ մի քանի ստեղծագործություն:

**Դաս 2. «Մպանված աղավնին» վիպակը, սյուժեն և բովանդակությունը**

[Թեմատիկ պլանավորում](#)

**Հարցերն առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ո՞ւմ կամ ինչի՞ մասին է վիպակը:
2. Ովքե՞ր են վիպակի կերպարները:
3. Ո՞ր կերպարն է ներկայացնում Նար-Դոսին:

## Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա

1. Վիպակի սյուժետային հիմնական գիծը:
2. Գլխավոր կերպարներին:
3. Հեղինակի կերպարը վիպակում:

## Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

1. Հիշել վեպի սյուժեն:
2. Մտապահել վիպակի գլխավոր կերպարներին:
3. Ներկայացնել Միքայել Մարգարյանի ով լինելը:

## Դաս 3. Գարեգին Միսակյանի և Ռուբեն Թուսյանի կերպարները

[Թեմատիկ պլանավորում](#)

## Հարցերն առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատար ումը ստուգելու համար

1. Ո՞վ է Գարեգին Միսակյանը:
2. Ինչպիսի՞ կերպար է Գարեգինը:
3. Ո՞վ է Ռուբեն Թուսյանը:

ա.Թվե՛ք Թուսյանի բացասական /դրական/կողմերը:

4. Ինչպիսի՞ կերպար է նա:

5. Նշված կերպարներից որի՞ն էս ավելի համակրում և ինչու՞:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Գարեգինի ով լինելը:

2. Գարեգինի կերպարի առանձնահատկությունները:

3. Թուսյանի ով լինելը:

4. Թուսյանի կերպարի առանձնահատկությունները:

5. Նշված կերպարների համեմատական բնութագիրը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Մտապահել Գարեգինի կերպարը:

2. Ներկայացնել Գարեգինին:

3. Մտապահել Թուսյանի կերպարը:

4. Բնութագրել Թուսյանին:

5. Համեմատել Գարեգինի և Թուսյանի կերպարները:

#### **Դաս 4. Սառայի կերպարը Թեմատիկ պլանավորում**

**Հարցերևառաջադրանքներատարկայիչափորոշչայիննվազագույնպահանջներիկատարումըստուզելուհամար**

1. Ո՞վ է վիպակի հերոսուհին:
2. Գնահատե՛ք Սառայի արարքները:
3. Ինչպիսի՞ կերպար է Սառան:
4. Ո՞ւմ էր սիրել Սառան:
5. Ո՞ւմ հետ ամուսնացավ Սառան. :

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Սառայի ով լինելը:
2. Տեսակետ ունենալու և արտահայտելու կարևորությունը:
3. Սառայի կերպարի բնութագիրը:
4. Սառայի և Թուսյանի հարաբերությունները:
5. Սառայի և Գարեգինի ամուսնությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Հիշել՝ ով է Սառան:
2. Բնութագրել Սառային:
3. Ներկայացնել Սառայի և Թուսյանի հարաբերությունները:
4. Ներկայացնել Սառայի և Գարեգինի ամուսնությունը:
5. Ընդգծել կերպարի դրական և բացասական կողմերը:

**Դաս 5. Գրիգոր Զոհրապ, կենսագրությունը, ստեղծագործության ընդհանուր բնութագիրը**[Թեմատիկ պլանավորում](#)

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ո՞ր դարաշրջանում է ծնվել և ստեղծագործել Գր. Զոհրապը:
2. Ի՞նչ մասնագիտություն ուներ Գր. Զոհրապը:
3. Նշի՛ր Զոհրապի պատվանունը:
4. Ի՞նչ գիտես Զոհրապի մահվան տարեթվի՝ 1915 թվականի մասին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Գր. Զոհրապի ապրած և ստեղծագործած դարաշրջանը:
2. Զոհրապի մասնագիտությունը:
3. Զոհրապի պատվանունը:
4. Զոհրապի մահվան թվականը, ժամանակաշրջանի պատմական իրադարձությունները:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. Մտապահել Գր. Զոհրապի ապրած դարաշրջանը
2. Նշել Զոհրապի մասնագիտությունը:
3. Ասել Զոհրապի պատվանունը:
4. Ներկայացնել 1915 թվականի ողբերգությունը:

**Դաս 6.«Ճիտին պարտքը» նորավեպը**[Թեմատիկ պլանավորում](#)

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ինչպիսի՞ ավարտ են ունենում նորավեպերը:
2. Նշի՛ր նորավեպի գլխավոր հերոսի անունը:
3. Ներկայացրե՛ք նորավեպի գլխավոր հերոսի ողբերգության պատճառը:
4. Ինչպե՞ս է ավարտվում «Ճիտին պարտքը» նորավեպը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

- 1.Նորավեպի ժանրային առանձնահատկությունները:
- 2.«Ճիտին պարտքը» նորավեպի գլխավոր հերոսի անունը:
- 3.«Ճիտին պարտքը» նորավեպի գլխավոր հերոսի ողբերգության պատճառը:
- 4.Նորավեպի ավարտը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

- 1.Ներկայացնել նորավեպի ժանրային առանձնահատկությունները:
- 2.Մտապահել «Ճիտին պարտքը» նորավեպի գլխավոր հերոսի անունը:
3. Ասել նորավեպի գլխավոր հերոսի ողբերգության պատճառը:
- 4.Նկարագրել նորավեպի ավարտը:

**Դաս7. «Երջանիկ մահը» նորավեպը [Թեմատիկ պլանավորում](#)**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Արդյո՞ք մահը կարող է լինել երջանիկ:
2. Բացատրե՛ք «կինը ծիծաղ է և չպետք է լացի փոխվի » արտահայտությունը:
3. Ինչու՞ է նորավեպը կոչվում «Երջանիկ մահ»:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Տեսակետ հայտնելու կարևորությունը:
2. Նորավեպի բովանդակությունը:
3. Վերնագրի կարևորությունն ու նշանակությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. Հայտնել իր կարծիքն ու տեսակետը՝ հիմնավորելով դրանք:
2. Հասկանալ գրողի ասելիքի իմաստն ու վերաբերմունքը:
3. Ընտրել նոր վերնագիր նորավեպի համար:



**Դաս 8. «Զաբուղոն» նորավեպը [Թեմատիկ պլանավորում](#)**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ո՞վ էր Զաբուղոնը:
2. Ի՞նչ զբաղմունք ու «մասնագիտություն» ուներ Զաբուղոնը:
3. Նշի՞ր Զաբուղոնի սիրած աղջիկա անունը:
4. Ու՞ր է գնում Զաբուղոնը նորավեպի վերջում:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Զաբուղոնի՝ ինչպիսի կերպար լինելը:
2. Նորավեպի գլխավոր հերոսի զբաղմունքը:
3. Նորավեպի գլխավոր հերոսի սիրած աղջկա անունը:
4. Նորավեպի բովանդակությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. Բնութագրել նորավեպի գլխավոր հերոսին:
2. Ներկայացնել նորավեպի հերոսի զբաղմունքն ու «մասնագիտությունը»:
3. Մտապահել Զաբուղոնի սիրած աղջկա անունը:
4. Հիշել նորավեպի ավարտը:

**Դաս 9. Հովհաննես Թումանյան. կյանքը, գրական և հասարակական գործունեությունը**[Թեմատիկ պլանավորում](#)

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ե՞րբ է ծնվել Հովհաննես Թումանյանը:
2. Որտե՞ղ է ծնվել Բանաստեղծը:
3. Թումանյանը ո՞ր քաղաքում է անցկացրել իր կյանքի մեծ մասը:
4. «Սասնա ծռեր» էպոսի հերոսներից ու՞մ մասին է գրել Թումանյանը:  
ա. Մի քանի բառով բնութագրե՛ք այդ հերոսին:
5. Ո՞ր ստեղծագործության մեջ է Թումանյանն անդրադառնում մարդու դավաճանությանը, գործի անմահությանը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Թումանյանի ծննդյան թվականը կամ դարաշրջանը:
2. Բանաստեղծի ծննդավայրը:
3. Գրողի բնակության հիմնական քաղաքը:
4. «Սասունցի Դավիթ» պոեմը (նշում է վերնագիրը):
5. «Թմկաբերդի առումը» (նշում է վերնագիրը):

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Նշել Թումանյանի ծննդյան թվականը կամ դարաշրջանը:
2. Մտապահել գրողի ծննդավայրը:
3. Անվանել այն քաղաքը, որտեղ ապրել է Բանաստեղծը:
4. Մտապահել «Սասունցի Դավիթ» պոեմի վերնագիրը:
5. Նշել «Թմկաբերդի առումը» պոեմի վերնագիրը:

## **Դաս 10. Թումանյանի հայրենասիրական քնարերգությունը**

[Թեմատիկ պլանավորում](#)

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Պատմական ո՞ր իրադարձության արձագանքն է 1915 թվականին գրված «Հոգեհանգիստ» բանաստեղծությունը:
2. Ո՞ւմ համար էր հոգեհանգիստ կարդում Թումանյանը:
3. Ինչպե՞ս կբացատրեք «հույսի հայրենիք, լույսի հայրենիք» բանաստեղծական տողը:
4. Թումանյանի հայրենասիրական քնարերգությունից առնվազն մեկ ստեղծագործություն նշե՛ք:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. «Հոգեհանգիստ» բանաստեղծության՝ Եղեռնի օրերին գրվելը:
2. «Հոգեհանգիստ» բանաստեղծության «հանգե՛ք իմ որբեր» տողը:
3. Բանաստեղծական տրված տողի ասելիքը:
4. Թումանյանի հայրենասիրական գործերից առնվազն մեկը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Նշել «Հոգեհանգիստ» բանաստեղծության՝ Եղեռնի օրերին գրված լինելը:
2. Ներկայացնել՝ ում համար է հոգեհանգիստ կարդում բանաստեղծը:
3. Բացատրել բանաստեղծական տրված տողը:
4. Անվանել Թումանյանի հայրենասիրական գործերից առնվազն մեկը:



**Դաս 11.«Անուշ». պոեմի ժանրային և կառուցվածքային առանձնահատկությունները**

**Թեմատիկ պլանավորում**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Քանի՞ խմբի են բաժանվում պոեմները:
2. Ինչպե՞ս կբացատրեք «նախերգանք» բառը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Քանի տեսակի են բաժանվում պոեմները:
2. «Նախերգանք» բառի բացատրությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Հիշել պոեմների խմբերը:
2. Մտապահել «Անուշ» պոեմի գլխավոր կերպարներին:



## Դաս 12. Պոեմի բովանդակությունն ու հերոսների հոգեբանությունը

### Թեմատիկ պլանավորում

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Արդյո՞ք սիրում էիր իրար Անուշն ու Սարոն:
2. Ի՞նչ էր Անուշի եղբոր անունը:
3. Անուշի եղբայրն ինչու՞ է զայրանում, երբ հարսանիքի ժամանակ Սարոն նրա մեջքը գետնով է տալիս:
4. Ո՞վ է սպանում Սարոյին:  
Նշե՛ք ձեր կարծիքը նրա արարքի մասին:
5. Ինչպե՞ս է ավարտվում Անուշի կյանքը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Գլխավոր հերոսների սիրո մասին:
2. Հերոսուհու եղբոր անունը:
3. Մոսիի զայրույթի պատճառը:
4. Մոսիի հանցանքը:
5. Անուշի ինքնասպանությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Ներկայացնել Անուշի և Սարոյի՝ միմյանց սիրելը:
2. Նշել Անուշի եղբոր անունը:
3. Բացատրել Մոսիի զայրույթի պատճառը:
4. Անվանել գլխավոր հերոսին սպանողին:
5. Ներկայացնել Անուշի կյանքի ավարտը:

**Դաս 13. Թումանյանի քառյակները**[Թեմատիկ պլանավորում](#)

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ո՞րն է «քառյակ» բառի արմատը:
2. Քանի՞ տող ունի քառյակը:
3. Թումանյանի ո՞ր քառյակն էք հիշում:  
ա. Արտասանե՛ք առնվազն մեկը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Քառյակ բառի արմատը:
2. Քառյակի տողերի քանակը:
3. Թումանյանի քառյակներից առնվազն մեկը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար *սովորողը պետք է կարողանա.***

1. Բացատրել քառյակ բառի արմատը:
2. Նշել քառյակի տողերի քանակը:
3. Արտասանել Թումանյանի քառյակներից առնվազն մեկը:



**Դաս 14. «Գելը» պատմվածքը [Թեմատիկ պլանավորում](#)**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ըստ ձեզ՝ գայլն ինչու՞ է վախենում պարանից:
2. Կենդանիների մասին պատմող ուրիշ ի՞նչ ստեղծագործություններ է գրել Թումանյանը:  
ա. Նշե՛ք Թումանյանի՝ կենդանիների մասին պատմող առնվազն մեկ պատմվածքի վերնագիր:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. «Գելը» պատմվածքի որոշ դրվագներ:
2. Թումանյանի՝ կենդանիների մասին պատմող ևս մեկ ստեղծագործության վերնագիր:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Պատմել գայլերին բնորոշ առանձնահատկությունների մասին:
2. Մտապահել Թումանյանի՝ կենդանիների մասին պատմող ևս մեկ պատմվածք:



**Դաս 15. «Գիքորը» պատմվածքը [Թեմատիկ պլանավորում](#)**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ո՞վ էր Գիքորի հայրը:
2. Ինչպե՞ս էր ապրում պատմվածքի փոքրիկ հերոսը քաղաքում:
3. Ի՞նչ ճակատագիր ունեցավ Գիքորը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Գիքորի հոր անունը:
2. Գիքորի կյանքը քաղաքում:
3. Պատմվածքի հերոսի ճակատագիրը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Նշել Գիքորի հոր անունը:
2. Ներկայացնել Գիքորի կյանքը քաղաքում:
3. Մտապահել պատմվածքի վերջաբանը:

**Դաս16 . Ավետիք Բսահակյանի կյանքը**[Թեմատիկ պլանավորում](#)

**Հարցերևառաջադրանքներառարկայիչափորոշայիննվագագույնպահանջներիկատարումըստուգելուհամար**

1. Որտե՞ղ է ծնվել Բսահակյանը:
2. Ի՞նչ պատվանուն է տվել ժողովուրդը գրողին:
3. Բսահակյանը գրական ո՞ր խմբակի անդամ է եղել:

**Հարցերինպատասխանելուկամառաջադրանքներըկատարելուհամարսովորողըպետքէ իմանա.**

1. Բսահակյանի ծննդավայրը:
2. Գրողի պատվանունը:
- 3.«Վերնատուն» գրական խմբակին անդամակցելը :

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. ՀիշելԲսահակյանի ծննդավայրը:
2. Նշել գրողիպատվանունը:
3. Ներկայացնել«Վերնատան» անդամ լինելը:

## **Դաս 17. Իսահակյանի ստեղծագործությունը. հայրենիքը, մայրը**

### **Թեմատիկ պլանավորում**

**Հարցերն առաջադրանքներն առարկայի չափորոշային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ է նշանակում պանդուխտ:
2. Մորը նվիրված ի՞նչ ստեղծագործություններ գիտեք. նշե՛ք վերնագրերը :
3. «Մեր պատմիչներն ու մեր գուսանները» բանաստեղծությունից ինչ ես հիշում:
4. Նշե՛ք հայ պատմիչներից և գուսաններից մի քանիսին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Պանդուխտ բառի իմաստը՝:
2. Իսահակյանի՝ մորը նվիրված ստեղծագործություններից:
3. «Մեր պատմիչներն ու մեր գուսանները» բանաստեղծությունը:
4. Մի քանի պատմիչի կամ գուսանի անուն:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Բացատրել պանդուխտ բառը:
2. Ներկայացնել մորը նվիրված ստեղծագործությունները:
3. Ներկայացնել „Մեր պատմիչներն ու մեր գուսանները,, բանաստեղծությունը:
4. Նշել մի քանի պատմիչի կամ գուսանի անուն:

**Դաս 18. «Հայրենի հող» բալլադը**[Թեմատիկ պլանավորում](#)

**Հարցերև առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ինչի՞ մասին է «Հայրենի հող» բալլադը:
2. Ինչու՞ է հայրենիքից հեռանում քաջ զորականը:
3. Ի՞նչն է ստիպում զորականին ստիպում վերադառնալ վտանգի մեջ գտնվող հայրենիք:  
ա. Ներկայացրե՛ք՝ ինչ է ձեզ համար հայրենիքը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Բալլադի սյուժետային հիմնական գիծը:
2. Ջորականի՝ հայրենիքից հեռանալու պատճառը:
3. Ջորականի՝ հայրենիք վերադառնալու պատճառը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Պատմել բալլադի սյուժեն:
2. Ներկայացնել զորականի՝ հայրենիքից հեռանալու պատճառը:
3. Ասել զորականի՝ հայրենիք վերադառնալու պատճառը:

## **Դաս 19. Սերը Թեմատիկ պլանավորում**

**Հարցերն առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Իսահակյանի սիրային ո՞ր ստեղծագործությունները գիտեք :
2. Ի՞նչի մասին է «Ասպետի սերը» բալլադը:
3. Սիրո խորհրդանիշ ի՞նչ ծաղիկ է աղջիկը նվիրում ասպետին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Իսահակյանի սիրային մի քանի ստեղծագործություն:
2. „Ասպետի սերը,, բալլադի սյուժեն:
3. Ինչ է նվիրում աղջիկը ասպետին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Ներկայացնել Իսահակյանի սիրային ստեղծագործություններից մի քանիսը:
2. Հիշել, «Ասպետի սերը,, բալլադի սյուժեն:
3. Մտապահել՝ աղջիկը ասպետին նվիրում է սիրո խորհրդանիշ վարդ:

Դաս 20. «Աբու-Լալա Մահարի» պոեմը [Թեմատիկ պլանավորում](#)

**Հարցերև առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ում անունն է օգտագործել Իսահակյանը պոեմը վերնագրելիս:
2. Ըստ պոեմի՝ ամեն ինչ մերժելուց հետո ում է ընդունում Աբու-Լալա Մահարին:
3. Որն է աշխարհը մերժող բանաստեղծի վերջին հանգրվանը:
4. Բնութագրիր Աբու-Լալա Մահարուն

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Ով է Աբու-Լալա Մահարին:
2. Մահարու՝ միայն մորը ընդունելը:
3. Արևի՝ վերջին հանգրվան լինելը:
4. Պոեմի հերոսի բնութագիրը ընդհանուր գծերով:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Մտապահել արար բանաստեղծի անունը:
2. Ներկայացնել Մահարու՝ մորը չմերժելը:
3. Մտապահել Մահարու վերջին հանգրվանը:
4. Բնութագրել պոեմի հերոսին:



Դաս 21. Իսակյանի բանաստեղծական արվեստը [Թեմատիկ պլանավորում](#)

**Հարցերն առաջադրանքներն արկայիչ փորձչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Հեղինակի օգտագործած *դարդ, բեզարած, ծիտ, էղներ* բառերը ո՞ր բառապաշարին են հատուկ:
2. Գրի՛ր վերը նշված բառերի գրական համարժեքները:
3. Իսահակյանի ստեղծագործությունները՝ արևելյան տաք գույներով շաղախված, հայ ո՞ր նկարչի կտավներն են հիշեցնում:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Հեղինակի՝ ժողովրդական բառուբանը առատորեն օգտագործելը:
2. Տրված բառերի գրական համարժեքները:
3. Իսահակյանի երկերի և Մ. Սարյանի կտավների նման լինելը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Ցույց տալ ժողովրդական բառապաշարին պատկանող բառերը:
2. Ասել տրված բառերի գրական տարբերակները:
3. Հիշել Մարյանի անունը:



**Դաս 22. Իսահակյանի արձակը**[Թեմատիկ պլանավորում](#)

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Իսահակյանի արձակ երկերից ո՞րը գիտես:
2. Ո՞վ է Լիլիթը:
3. Ովքե՞ր են Ադամն ու Եվան: Գրի՛ր՝ որտեղից ես հիշում Ադամ և Եվա անունները:
4. Ո՞վ է Սաադին:
5. Բացատրի՛ր Սաադիի խոսքը. «Ծնվում ենք ակամա, ապրում ենք զարմացած, մեռնում ենք կարոտով»

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Իսահակյանի արձակից մի քանի ստեղծագործությունների վերնագրեր:
2. Լիլիթի ով լինելը:
3. Ադամի և Եվայի ով լինելը:
4. Սաադիի ով լինելը:
5. Սաադիի հայտնի արտահայտության բացատրությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Մտապահել հեղինակի արձակ գործերից մի քանիսի վերնագրերը:
2. Հիշել Լիլիթի ով լինելը:
3. Հիշել Ադամի և Եվայի ով լինելը:
4. Մտապահել Սաադիի ով լինելը:
5. Ներկայացնել Սաադիի հայտնի արտահայտությունը:

**Դաս 23.Լ. Շանթ. կյանքը, ստեղծագործության ընդհանուր բնութագիրը**

**Թեմատիկ պլանավորում**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ո՞ր դարաշրջանում է ապրել և ստեղծագործել Լ. Շանթը:
2. Ասե՛ք Լ. Շանթի ազգանունը:
3. Ո՞ր հայտնի գրական խմբակին է անդամակցել Լ. Շանթը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Շանթիապրած դարաշրջանը:
2. Շանթի ազգանունը:
3. Գրական խմբակի անունը, որին անդամակցել է Շանթը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. Ասել այն դարաշրջանը, երբ ապրել և ստեղծագործել է Լ. Շանթը:
2. Նշել Շանթի ազգանունը:
3. Անվանել գրական խմբակը, որին անդամակցել է Լ. Շանթը:

**Դաս 24. «Հին աստվածներ» դրաման Թեմատիկ պլանավորում**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ էք հասկանում՝ «հին աստվածներ» ասելով:
- ա. Նշե՛ք հայոց հին աստվածներից առնվազն մեկին:
2. Ո՞ր կղզում են կատարվում «Հին աստվածներ» դրամայի դեպքերը:
3. Ովքե՞ր են «Հին աստվածներ» դրամայի կերպարները:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Հեթանոսական աստվածներին:
2. «Հին աստվածներ» դրամայի դեպքերի կատարման վայրը:
3. «Հին աստվածներ» դրամայում գործող կերպարների անունները:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. Մտապահել հեթանոսական աստվածների անունները:
2. Ասել այն վայրի անունը, որտեղ կատարվում են «Հին աստվածներ» դրամայի դեպքերը:
3. Թվարկել «Հին աստվածներ» դրամայի գործող անձանց անունները:

Դաս 25.«Հին աստվածներ» դրամայի գլխավոր կերպարները (Աբեղա, Իշխանուհի, Վանահայր)[Թեմատիկ պլանավորում](#)

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1.Ո՞վ էր Վանահայրը:

2.Ի՞նչ էր կառուցում նա:

3.Ո՞վ էր Իշխանուհին:

ա. Նշե՛ք նրա անունը:

4.Ի՞նչ էր այն աղջկա անունը, ում փրկում է Աբեղան:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Վանահորկերպարիառանձնահատկությունները:

2. Վանահորգործունեությունը:

3. Իշխանուհուանունը:

4. Աբեղայի կողմից փրկված աղջկա անունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1.Ներկայացնել Վանահոր կերպարը:

2. Մտապահել Վանահոր գործունեությունը:

3. Ասել Իշխանուհու անունը:

4.Հիշել այն աղջկա անունը, ում փրկում է Աբեղան:

**Դաս 26. Միսաք Մեծարենց. Կյանքը [Թեմատիկ պլանավորում](#)**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Մեծարենցն արևելահայ<sup>՞</sup>, թե՞ արևմտահայ բանաստեղծ է:

ա.Նշե՛ք, թե որ ժամանակաշրջանում է ապրել և ստեղծագործել նա:

2.Ըստ քեզ՝ շփոթում<sup>՞</sup> նք էր Մեծարենցի դանակահարությունը թուրք տղաների կողմից:

3. Ի՞նչ հիվանդությամբ էր տառապում բանաստեղծը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Մեծարենցի՝ արևմտահայ բանաստեղծ լինելը:

2. Նրա ապրած ժամանակաշրջանը:

3. Մեծարենցի դանակահարության պատմությունը:

4. Բանաստեղծի հիվանդությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Ընդգծել Մեծարենցի արևմտահայ լինելը:

2. Նշել նրա ապրած ժամանակաշրջանը:

3. Պատմել Մեծարենցի դանակահարության մասին:

4. Նշել բանաստեղծի հիվանդությունը:

**Դաս 27. Ստեղծագործությունը: Անձնական ցավի նվագներ**[Թեմատիկ պլանավորում](#)

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվագագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչն էր բանաստեղծի դժբախտության պատճառը:
2. Նշի՛ր Մեծարենցի ժողովածուներից կամ բանաստեղծություններից առնվազն մեկը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Բանաստեղծի դժբախտության պատճառը:
2. Ժողովածուներից կամ բանաստեղծություններից առնվազն մեկի վերնագիրը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. **Նկարագրել** Մեծարենցի դժբախտությունը:
2. **Ասել** ժողովածուներից կամ բանաստեղծություններից մեկի վերնագիրը:



**Դաս 28. Սիրո երգը** [ենատիկ\\_պլանավորում](mailto:ենատիկ_պլանավորում)

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ ես հասկանում՝ «սիրերգ» ասելով:
2. Ի՞նչ ես հիշում Սիրերգ բանաստեղծությունից:
3. Բացատրի՛ր «մենավոր հոգի» արտահայտության իմաստը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. «Սիրերգ» բառի իմաստը:
2. Մի քանի բառ կամ արտահայտություն Սիրերգ բանաստեղծությունից:
3. «Մենավոր հոգի» արտահայտության իմաստը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Բացատրել «սիրերգ» բառի իմաստը:
2. Մտապահել մի քանի բառ կամ արտահայտություն Սիրերգից:
3. Բացատրել «մենավոր հոգի» արտահայտության իմաստը:

## **Դաս 29. Բնության երգը [Թեմատիկ պլանավորում](#)**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ ես հասկանում՝ «բնապաշտ» ասելով:
2. Ի՞նչ է աքասիան (ակացիա):
3. Բացատրի՛ր «անձնավորել» բառի իմաստը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. «Բնապաշտ» բառի իմաստը:
2. «Աքասիա» (ակացիա) բառի իմաստը:
3. «Անձնավորել» բառի նշանակությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Բացատրել «բնապաշտ» բառի իմաստը:
2. Տալ «աքասիա» բառի բացատրությունը:
3. Բացատրել «անձնավորել» բառի իմաստը:

**Դաս 30. Մարդասիրությունը: Արվեստը Թեմատիկ պլանավորում**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ է մարդասիրությունը ձեզ համար:
2. Ինչպե՞ս է վերաբերվում բանաստեղծը մարդկանց:
3. Ո՞ր բանաստեղծության մեջ է Մեծարենցն Աստուծոց անանձնական ուրախությունն ինդրում:

ա.Բացատրե՛ք «Տու՛ր ինձի տեր ուրախությունն անանձնական» տողի իմաստը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. «Մարդասիրություն» հասկացության ընդհանուր նշանակությունը:
2. Մեծարենցի մարդասեր լինելը:
3. Տրված բանաստեղծությունը և նշված տողի արտահայտած իմաստը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Բացատրել «մարդասիրություն» բառի իմաստը:
2. Նկարագրել Մեծարենցի մարդասիրությունը:
3. Անվանել բանաստեղծությունը:
4. Բացատրել տրված տողի իմաստը:

**Դաս 31. Միամանթո. կյանքը և ստեղծագործությունը**[Թեմատիկ պլանավորում](#)

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Որտե՞ղ է ծնվել Միամանթոն:
  - ա. Ասե՛ք Միամանթոյի իսկական անուն-ազգանունը:
2. Ի՞նչ է հուշում մեզ Միամանթոյի մահվան թվականը՝ 1915:
3. Միամանթոյի բանաստեղծական շարքերից որո՞նք գիտեք:
4. Ի՞նչ լեզվով է ստեղծագործել Միամանթոն:

5. Ինչպե՞ս կբացատրեք դավաճաններին վերաբերող այս տողը.

*Մեռելներ կան, որ պե՛տք է անգամ մը եւս մեռցնել:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Միամանթոյի ծննդավայրը:
2. Հեղինակի անուն-ազգանունը:
3. Միամանթոյի՝ Մեծ եղեռնի գոհ լինելը:
4. Միամանթոյի բանաստեղծական շարքերց մի քանիսի անունները:
5. Միամանթոյի՝ արևմտահայ գրող լինելը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Մտապահել Միամանթոյի ծննդավայրը:
2. Ասել հեղինակի անուն-ազգանունը:
3. Ներկայացնել Միամանթոյի՝ Մեծ եղեռնի գոհ լինելը:
4. Մտապահել բանաստեղծական շարքերից մի քանիսը:
5. Հիշել Միամանթոյի արևմտահայ լինելը:

**Դաս 32. Սիամանթոյի «Հայորդիներ» և «Հոգեվարքի և հույսի ջահեր» շարքերը**

[Թեմատիկ պլանավորում](#)

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ինչի՞ մասին են Սիամանթոյի բանաստեղծական շարքերը:
2. Ինչի՞ համար են պայքարում շարքում հիշատակված հայորդիներ Խրիմյան Հայրիկը, Աղբյուր Սերոբը, Անդրանիկը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Սիամանթոյի շարքերի բովանդակությունը:
2. Նշված հերոսների պայքարի նպատակը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Մտապահել Սիամանթոյի երկերի բովանդակությունը:
2. Ներկայացնել Սիամանթոյի նշած հերոսների պայքարի նպատակը:

**33. «Կարմիր լուրեր բարեկամես»[Թեմատիկ պլանավորում](#)**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ինչպե՞ս կփոխադրեք արևելահայերենի «Կարմիր լուրեր բարեկամես» շարքի անունը:
2. Ի՞նչ էք հիշում «Պարը» բանաստեղծությունից:
3. Բացատրե՛ք հետևյալ տողի իմաստը «Ո՛վ մարդկային արդարություն, թո՛ղ ես թքնեմ քու ճակատիդ»:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Սիամանթոյի «Կարմիր լուրեր բարեկամես» բանաստեղծական շարքի արևելահայերեն փոխադրությունը:
2. «Պարը» բանաստեղծության բովանդակությունը:
3. Սիամանթոյի հայտնի արտահայտության բացատրությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. **Մտապահել** Սիամանթոյի „Կարմիր լուրեր բարեկամես,, բանաստեղծական շարքի կառուցվածքային առանձնահատկությունը:
2. **Ներկայացնել** «Պարը» բանաստեղծության բովանդակությունը:
3. **Մտապահել** «Պարը» բանաստեղծության հիմնական գաղափարը ներկայացնող արտահայտությունը:

**Դաս 34. Դանիել Վարուժան. Կյանքը**[Թեմատիկ պլանավորում](#)

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Վարուժանն արևելահայ՞, թե՞ արևմտահայ գրող է:
2. Ո՞ր ժամանակաշրջանում է ապրել նա:
3. 1915 թվականի ապրիլի 24 -ին ի՞նչ տեղի ունեցավ Կ. Պոլսում:
4. Ինչպե՞ս ավարտվեց Վարուժանի կյանքը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Վարուժանի արևմտահայ լինելը:
2. Նրա ապրած ժամանակաշրջանը:
3. 1915 թ. ապրիլի 24 -ին տեղի ունեցած իրադարձությունը:
4. Վարուժանի ճակատագիրը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Ընդգծել Վարուժանի արևմտահայ լինելը:
2. Նշել նրա ապրած ժամանակաշրջանը:
3. Պատմել 1915 թ. ապրիլի 24 - ին տեղի ունեցածի մասին:
4. Նկարագրել Վարուժանի կյանքի վերջաբանը:





**Դաս 35. Ստեղծագործությունը: «Սարսուռներ»: «Ցեղին սիրտը»**

**Թեմատիկ պլանավորում**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ է նշանակում «սարսուռ»:
2. Ըստ ձեզ՝ Վարուժանն իր հայրենակիցներին ինչու՞ է հիշեցնում անցյալի հզորության և փառքի մասին:  
ա. Բացատրե՛ք ձոն» բառի իմաստը:
3. Ողբերգական ի՞նչ իրավիճակում էր գտնվում արևմտահայությունը Վարուժանի կյանքի տարիներին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. «Սարսուռ» բառի իմաստը:
2. Անցյալը հիշեցնելու Վարուժանի դրդապատճառը:
3. «Ձոն» բառի իմաստը:
4. Վարուժանի՝ անցյալի փառքը երգելու շարժառիթները:
5. Արևմտահայության կացությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Բացատրել «սարսուռ» բառի իմաստը:
2. Ներկայացնել Վարուժանի՝ անցյալը գովերգելու շարժառիթները
3. Բացատրել «ձոն»բառի նշանակությունը:
4. Նկարագրել արևմտահայության կացությունը Վարուժանի կյանքի տարիներին:

**Դաս 36. «Հեթանոս երգեր» Թեմատիկ պլանավորում**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ է հեթանոսությունը:
2. Թվարկի՞ր հայոց հեթանոս աստվածներից կամ աստվածուհիներից մի քանիսին:
3. Ըստ ձեզ՝ Վարուժանն ինչու՞ էր գովերգում հայ ժողովրդի հեթանոսական հզոր անցյալը:
4. Անվանե՞ք Վարուժանի այն պոեմը, որ ներառված է «Հեթանոս երգեր» ժողովածուի մեջ:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. «Հեթանոսություն» հասկացության նշանակությունը:
2. Հայոց դիցարանի աստվածներից կամ աստվածուհիներից մի քանիսի անունները:
3. Վարուժանի՝ հեթանոսական անցյալը գովերգելու շարժառիթները:
4. «Հեթանոս երգեր» ժողովածուում ներառված պոեմի վերնագիրը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Բացատրել «հեթանոսություն» հասկացության իմաստը:
2. Թվարկեր հայոց հեթանոս աստվածներից կամ աստվածուհիներից մի քանիսին:
3. Պարզաբանել Վարուժանի՝ հեթանոսական անցյալը գովերգելու շարժառիթները:
4. Անվանել «Հեթանոս երգեր» ժողովածուում ընդգրկված պոեմը:

**Դաս 37. «Հարճը»[Թեմատիկ պլանավորում](#)**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ո՞ր պատմիչի աշխատությունից է օգտվել Վարուժանը «Հարճը» պոեմը գրելիս:
2. Տրդատն ինչու՞ է որոշում փախցնել Նազենիկին:
3. Ի՞նչ ճակատագիր է ունենում հերոսուհին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Պոեմի պատմական աղբյուրը:
2. Սիրահարների փախուստի պատճառը:
3. Հերոսուհու ճակատագիրը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Նշել պոեմի պատմական աղբյուրը:
2. Ներկայացնել փախուստի պատճառը:
3. Մտապահել պոեմի հերոսուհու ճակատագիրը:

**Դաս 38. «Հացին երգը»[Թեմատիկ պլանավորում](#)**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ինչպե՞ս կբացատրես ժողովածուի վերնագիրը:
2. Կարո՞ղ եք հողագործական մի քանի աշխատանք թվարկել:
3. Ըստ ձեզ՝ ի՞նչ է խորհրդանշում հացը:
4. Վարուժանն ինչու՞ չկարողացավ ավարտել իր վերջին ժողովածուն:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա.**

1. Ժողովածուի վերնագրի ընդհանրական խորհուրդը:
2. Հացի խորհրդանշական իմաստը:
3. Ժողովածուի անավարտ մնալու պատճառը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա.**

1. Բացատրել ժողովածուի վերնագիրը:
2. Ներկայացնել հացի խորհրդանշական իմաստը:
3. Նշել ժողովածուի անավարտ մնալու պատճառը:

**Դաս 39. Վահան Տերյան. կյանքը, ստեղծագործության ընդհանուր բնութագիրը**

**Թեմատիկ պլանավորում**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար:**

1. Ո՞ր դարաշրջանում է ապրել և ստեղծագործել Վ. Տերյանը:
2. Որտե՞ղ է ծնվել Տերյանը
3. Նշե՛ք այն երկիրը, որտեղ հիմնականում ապրել և ստեղծագործել է նա:
4. Տերյանը բանաստեղծ է, թե՞ արձակագիր:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Տերյանի ապրած ժամանակաշրջանը:
2. Նրա ծննդավայրը:
3. Այն երկրի անունը, որտեղ հիմնականում ապրել է Վ. Տերյանը:
4. Տերյանի բանաստեղծ լինելը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Ասել** Տերյանի ապրած և ստեղծագործա ժամանակաշրջանը:
2. **Հիշել** Տերյանի ծննդավայրը:
3. **Ստապահել** այն երկրի անունը, որտեղ հիմնականում ապրել և ստեղծագործել է Տերյանը:
4. **Ներկայացնել Տերյանի՝** բանաստեղծ լինելը:

**Դաս 40. «Մթնշաղի անուրջներ» ժողովածուն** [Թեմատիկ պլանավորում](#)

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ո՞րն է Վ.Տերյանի առաջին ժողովածուն:
2. Օրվա ո՞ր ժամանակահատվածն է մթնշաղը:
3. Ի՞նչ է նշանակում «անուրջ»:
4. Տարվա եղանակներից որի՞նք էր գիշն է համարվում Տերյանը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Վ. Տերյանի առաջին ժողովածուն:
2. «Մթնշաղ» բառի նշանակությունը:
3. «Անուրջ» բառի բացատրությունը:
4. Վ. Տերյանի բանաստեղծություններում հաճախ կրկնվող տարվա եղանակը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Մտապահել** Տերյանի բանաստեղծական առաջին ժողովածուն:
2. **Նկարագրել** մթնշաղը:
3. **Բացատրել** *անուրջ* բառը:
4. **Ասել**՝ տարվա որ եղանակն է գերիշխում Տերյանի ստեղծագործություններում:

**Դաս 41. «Գիշեր և հուշեր», «Ոսկի հեքիաթ», «Ոսկե շղթա» շարքերը**

**Թեմատիկ պլանավորում**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Բանաստեղծական նույն շարքում ընդգրկված բանաստեղծություններն արդյո՞ք նման են իրար:

2. Փոխաբերական ի՞նչ իմաստներ ունի «ոսկի» բառը:

3. Ի՞նչ հույզեր են արթնացնում *մշուշ, շշուկ, անձրև, աշուն, թախիծ* բառերը:

4. Ինչի՞ խորհրդանիշ կարող է լինել կարուսելը՝ ըստ քեզ:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Բանաստեղծական շարքի մասին:

2. «Ոսկի» բառի փոխաբերական իմաստները:

3. Հեղինակի տրամադրությունը աշնան տեսարաններ նկարագրելիս:

4. Կարուսելի խորհրդանիշը «Կարուսել» բանաստեղծության մեջ:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Հասկանալ**՝ ինչ է բանաստեղծական շարքը:

2. **Տարբերել** բառի ուղիղ և փոխաբերական իմաստները:

3. **Ներկայացնել** բանաստեղծի հույզերը:

4. **Ըմբռնել** կարուսելի խորհրդանշական իմաստը:

**Դաս 42. «Երկիր Նաիրի» շարքը [Թեմատիկ պլանավորում](#)**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ո՞ր երկրի հնագույն անվանումներից մեկն է եղել Նաիրին:
2. Ինչի՞ մասին են «Երկիր Նաիրի» շարքի բանաստեղծությունները:
  - ա. Արտահայտե՛ք ձեր կարծիքը «Դու հպարտ չես, իմ հայրենի՛ք» բանաստեղծության «օ՛, հայրենիք՝ դառն ու անուշ» տողի վերաբերյալ:
4. Ինչպե՞ս կբացատրեք բանաստեղծության «դրախտ է նորից իմ հոգում» տողը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Այն երկրի անունը, որի հնագույն անվանումներից մեկը եղել է Նաիրի:
2. «Երկիր Նաիրի» շարքի բանաստեղծությունների թեման:
3. «Դառը» և «անուշ» բառերի փոխաբերական իմաստները:
4. «Կարծես թե դարձել եմ ես տուն» բանաստեղծության ընդգծված տողը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. Հիշել այն երկրի անունը, որի հնագույն անվանումներից մեկն էլ Նաիրին է եղել:
2. Առանձնացնել «Երկիր Նաիրի» շարքում ընգրկված բանաստեղծությունների թեման:
3. Հասկանալ գրողի զգացածը «օ, հայրենիք՝ դառն ու անուշ» տողը գրելիս:
4. Բացատրել «դրախտ է նորից իմ հոգում» տողը:



**Դաս 43. Նորագույն շրջանի հայ գրականություն [@Եմատիկ պլանավորում](#)**

**Հարցեր և առաջադրանքներ առարկայի չափորոշչային նվազագույն պահանջների կատարումը ստուգելու համար**

1. Ի՞նչ օր է մայիսի 28-ը:
2. Ի՞նչ էք հասկանում՝ խորհրդահայ գրականություն ասելով:
3. Ո՞վ է «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում» տողի հեղինակը:
4. Ըստ քեզ՝ ի՞նչ է ռեալիզմը (իրապաշտություն):

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Առաջին առաջին անկախ հանրապետության մասին:
2. Խորհրդահայ գրականության մասին:
3. Նշված տողի հեղինակին:
4. Ռեալիզմի բացատրությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. Նշել օրվան առնչվող իրադարձությունը:
2. Պատմել խորհրդային շրջանի մասին:
3. Անվանել հեղինակին:
4. Տալ ռեալիզմի նկարագիրն ընդհանուր գծերով:

**Դաս 44. ԵղիշեՉարենց, կյանքը, ստեղծագործությունը [Թեմատիկ պլանավորում](#)**

**Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջներին ստուգման համար**

1. Ո՞ր ժամանակներում է ստեղծագործել ԵղիշեՉարենցը:
2. Ո՞րն է Չարենցի առաջին տպագրված բանաստեղծությունը:
3. «Երեք երգ տխրադալուկ աղջկան» բանաստեղծություն է, թե՞ ժողովածու:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Ժամանակաշրջանը, որում ապրել և ստեղծագործել է Չարենցը:
2. Չարենցի առաջին շրջանի ստեղծագործությունները:
3. Չարենցի առաջին շրջանի ժողովածուները:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. Նշել Չարենցի ապրած ժամանակաշրջանը:
2. Վերատրադրել Չարենցի առաջին տպագիր բանաստեղծության առաջին տող-վերնագիրը:
3. Տարբերել ժողովածուն բանաստեղծությունից:

**Դաս 45. «Դանթեական առասպել» պոեմը [Թեմատիկ պլանավորում](#)**

**Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար**

1. Ե.Չարենցի «Դանթեական առասպել» պոեմի վերնագիրը իտալացի ո՞ր քանաստեղծի անվան հետ է առնչվում:
2. Համաշխարհային ո՞ր իրադարձության արտացոլում է «Դանթեական առասպել» պոեմում:
3. Ո՞ր ճակատամարտի դրվագներն են արտացոլված «Դանթեական առասպել» պոեմում:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Դանթե Ալիգիերիի անվան և «Դանթեական առասպել» պոեմի վերնագրի կապը:
2. «Դանթեական առասպել» պոեմի պատմական ժամանակաշրջանը:
3. «Դանթեական առասպել» պոեմում արտացոլված դեպքերի տեղն ու ժամանակը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. Նշել Դանթեի անունը:
2. Մատնանաշել «Դանթեական առասպել» պոեմում պատկերված ժամանակաշրջանը:
3. Նշել, որ պոեմում պատկերվող կովի տեսարանը Վանի ճակատամարտին է վերաբերում:

**Դաս 46. «Վահագն» պոեմը [Թեմատիկ պլանավորում](#)**

**Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար**

1. Ո՞վ է Վահագնը Չարենցի համանուն պոեմում:
2. Ի՞նչ բնորոշումներով է դիմում հեղինակը Վահագնին:
3. Լրացնել «Վահագն» ստեղծագործության վերջին տողերը.

Ու երբ քարշ տվին դիակդ արնաքամ,

Որ նետեն քաղցած ոհմակներին կեր,

-----

----- :

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Վահագն աստծո մասին որոշ տեղեկություններ:
2. «Վահագն» պոեմում Վահագնին բնորոշող հատկանիշները:
3. «Վահագն» պոեմից անգիր հատված:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. Դատելով ստեղծագործության տողերից՝ ցույց տալ կապը Վահագն աստծո և «Վահագն» պոեմի վերնագրի միջև:
2. Կարդալով «Վահագն» պոեմը՝ նշել Վահագնին բնութագրող հատկանիշները:
3. Հիշել պոեմը և լրացնել բաց թողած տողը:

Դաս 47. Չարենցի «Մահվան տեսիլ» բանաստեղծությունը [Թեմատիկ պլանավորում](#)

1. Ի՞նչ է նշանակում տեսիլ բառը.

ինչպե՞ս կմեկնաբանես բանաստեղծության վերնագիրը:

2. Ինչի՞ հետ է համեմատում բանաստեղծն իր սիրտը «Մահվան տեսիլ» բանաստեղծության մեջ:

*Որպես լքված թավջութակի ձգված մի լար՝*

*Դողում է սիրտս կարոտով մի ահարկու...*

3. Ավարտել Չարենցի «Մահվան տեսիլ» բանաստեղծության վերջի քառատողը.

*Թող դուրս ընկած իմ աչքերի մեջ կախվածի*

*Նորա տեսնեն պայծառ օրերդ ապագա,—*

-----,

----- . . .

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. **Տեսիլ** բառի բացատրությունը:

2. «Մահվան տեսիլ» բանաստեղծության բովանդակությունը:

3. «Մահվան տեսիլ» բանաստեղծությունից անգիր հատված:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Բացատրել բառի իմաստը և մեկնաբանել վերնագրի նշանակությունը:

2. Մեկնաբանել ընթերցածը:

3. Անգիր սովորած բանաստեղծության մեջ հիշել և տեղադրել բաց թողած տողերը:

**Դաս 48. «Սումա», «Ամբոխները խելագարված» պոեմները, կառուցվածքը, պոեմի բովանդակությունը**[Թեմատիկ պլանավորում](#)

1. Չարենցն ունի հնդկական դիցաբանության մեջ փառաբանված աստծո՝ Սումայի անունը կրող համանուն ստեղծագործություն: Այն բանաստեղծութո՞ւն է, թե՞ պոեմ:

2. Ո՞ր ստեղծագործությունից են հետևյալ տողերը.

*Հեռո՛ւ, մոտիկ ընկերներին,— աշխարհներին, արևներին,—*

*Հրանման հոգիներին:—*

*Բոլո՛ր նրանց, ում որ հոգին վառվում է վառ,—*

*Բոլո՛ր նրանց հոգիներին արևավառ,—*

*Կյանքի՛, մահի՛ այս ամեհի աղջամուղջում՝*

*Ողջակիզվող հոգիներին— ողջո՛ւյն, ողջո՛ւյն:—*

3. Ինչո՞ւ է Չարենցը ամբոխներին անվանում «խելագարված»:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Բանաստեղծության և պոեմի առանձնահատկությունները:
2. «Ամբոխները խելագարված» պոեմի առաջին հատվածը:
3. Խելագարված բառի մեկնաբանությունը ուղիղ և փոխաբերական իմաստներով: «Ամբոխները խելագարված» պոեմի բովանդակությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. Տարբերել բանաստեղծությունը պոեմից:
2. Տարբերել «Ամբոխները խելագարված» պոեմի տողերը այլ ստեղծագործություններից:
3. Ըստ բովանդակության և բառիմաստի ընկալման՝ ներկայացնի պոեմի գաղափարի սեփական ընկալումը:

**Դաս 49. Մարդու և բանաստեղծի ճակատագիրը. «Հարդագողի ճամփորդները», «Տեսիլաժամեր», «Հրո երկիր» [Թեմատիկ պլանավորում](#)**

1. Չարենցի ո՞ր ստեղծագործության մեջ է ներկայացված մի ամբողջ սերնդի տխուր կենսագրությունը:

2. Ո՞ր ստեղծագործությունից են հետևյալ տողերը.

*Հոգ չէ, որ մեր օրերն անցան տենդի պես,*

*Կյանքը դարձավ անմխիթար զառանցանք.*

*— Մենք կժպտանք, գո՛հ կժպտանք մեռնելիս,*

*Որ երազում երազեցինք ու անցանք...*

3. Ի՞նչպես էք բացատրում **տեսիլաժամ** բառը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Չարենցի «Հարդագողի ճամփորդները» բալլադի թեման:

2. Չարենցի «Հարդագողի ճամփորդները» բալլադը:

3. Բառը ենթարկել բառակազմական վերլուծության:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Ներկայացնել** «Հարդագողի ճամփորդները» բալլադի գլխավոր գաղափարը :

2. Ստեղծագործության տողերից **ճանաչել** «Հարդագողի ճամփորդները» բալլադը.

3. Ըստ բառակազմական վերլուծության՝ **մեկնաբանել** բառի իմաստը:

**Դաս 50. «Հեռացումի խոսքեր» բանաստեղծությունը [Թեմատիկ սյանավորում](#)**

1. Լրացնել Չարենցի «Հեռացումի խոսքեր» բանաստեղծությունից բաց թողած տողը.

*Ես երգել եմ քո հոգին, քո ժպիտը լուսավոր,*

*Քո աչքերի, քո դեմքի տիրությունը սրբազան.*

*Կյանքս թողած անհունում – ես երգել եմ սերը խոր*

----- ...

2. Ինչպե՞ս ես մեկնաբանում «լուսավոր ժպիտ», «խեղճ կարոտ» արտահայտությունները:

3. Քո կարծիքով ո՞ւմ է ասում բանաստեղծը հեռացումի խոսքերը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Չարենցի «Հեռացումի խոսքեր» բանաստեղծությունը անգիր:

2. Բառի փոխաբերական իմաստը:

3. «Հեռացումի խոսքեր» բանաստեղծության բովանդակությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Մտքում արտասանելով ստեղծագործությունը՝ **լրացնել** բաց թողած տողը:

2. **Բացատրել** փոխաբերաբար արտահայտված իմաստը:

3. **Վերարտադրել** «Հեռացումի խոսքեր» բանաստեղծության ընդհանուր բովանդակությունը:



**Դաս 51. Չարենցի «Տաղ անձնական» բանաստեղծությունը [Թեմատիկ պլանավորում](#)**

1. Չարենցի ո՞ր ստեղծագործությունից են հետևյալ տողերը.

*Թողած Կարսում, գետի ափին, տուն՝ շինված անտաշ քարով,  
Կարսը թողած, Կարսի այգին ու հայրենի երկինքը մով  
Եվ Կարինե Քոթանճյանին անգամ չասած մնաս բարով—  
Անց եմ կենում հիմա օտար քաղաքների ճանապարհով:*

2. Ի՞նչ կարևորություն ունեն Չարենցի համար Կարսը և Կարինե Քոթանճյանը:

3. Լրացնել Չարենցի «Տաղ անձնական» բանաստեղծության բաց թողած տողերը:

*Ու էլ ամեն մեղքի համար սիրտս հիմա ունի ներում.  
Պիտի անդարձ ես հեռանամ, օիտի գնամ՝ այքս է հեռուն.  
Թե կարինե Քոթանճյանին տեսնեք կարսի փողոցներում—*

----- ...

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Չարենցի «Տաղ անձնական» բանաստեղծության բովանդակությունը:
2. Չարենցի կենսագրությունը:
3. Չարենցի «Տաղ անձնական» բանաստեղծությունը անգիր:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. Ճանաչել Չարենցի «Տաղ անձնական» բանաստեղծությունը:
2. Բացատրել Կարս քաղաքի և Կարինե Քոթանճյանի կարևորությունը բանաստեղծի կյանքում:
3. Հիշել բանաստեղծությունը և լրացնել բաց թողած տողը:

**Դաս 52. «Տաղարան» շարքը. «Էլի գարուն կգա», «Ես իմ անուշ...»**

**բանաստեղծությունները [Թեմատիկ պլանավորում](#)**

1. Միջնադարյան ո՞ր բանաստեղծի ավան հետ է կապված «Տաղարան» շարքը:

2. Ո՞ր շարքում են «Էլի գարուն կգա» և «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունները:

3. Լրացնել բանաստեղծության վերջին տողը:

*Իմ կարոտած սրտի համար ոչ մի ուրիշ հեքիաթ չկա*

*Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա,*

*Աշխարհ անցիր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա, .....*

.....

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Չարենցի «Տաղարան» շարքի և Սայաթ- Նովայի գրական կապի մասին:

2. «Տաղարան» շարքի հանրահայտ բանաստեղծությունները:

3. «Ես իմ անուշ...» բանաստեղծությունն անգիր:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. Հիշել Սայաթ-Նովա-Եղիշե Չարենց գրական առնչության մասին:

2. Ճանաչել «Տաղարան» շարքի հանրահայտ բանաստեղծությունները:

3. Անգիր սովորած բանաստեղծությունից **հիշել** համապատասխան տողը:

**Դաս 53. «Գիրք Ճանապարհի» ժողովածուն: «Պատմության քառուղիներով»,  
«Դեպի լյառն Մասիս» [Թեմատիկ պլանավորում](#)**

1. Ո՞րն է Չարենցի վերջին ժողովածուն:
2. Ինչպե՞ս ես մեկնաբանում «Պատմության քառուղիներով» վերնագիրը:
3. Ո՞ւ մասին է «Դեպի լյառն Մասիս» պոեմը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար  
սովորողը պետք է իմանա**

1. Չարենցի ժողովածուները:
2. *Քառուղի* բառի իմաստը.«Պատմության քառուղիներով» ժողովածուի ընդհանրական բովանդակությունը:
3. «Դեպի լյառն Մասիս» պոեմի բովանդակությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար  
սովորողը պետք է կարողանա**

1. Հիշել Չարենցի ժողովածուները:
2. Բացատրել *Քառուղի* բառի իմաստը: Մեկնաբանել Ժողովածուի վերնագիրը:
3. Վերարտադրել «Դեպի լյառն Մասիս» պոեմի բովանդակությունը:

**Դաս 54. «Անվերնագիր» բանաստեղծությունը [Թեմատիկ պլանավորում](#)**

1. Ո՞ւմ է նվիրված Չարենցի «Անվերնագիր» բանաստեղծությունը:
2. Ինչպե՞ս կբացատրես *աղետ, համր, այրի, դժնի, անհաղորդ, տարտամ, ուրվակյան* բառերը:
3. Ի՞նչ զգացիր Չարենցի «Անվերնագիր» բանաստեղծությունը կարդալիս:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Չարենցի «Անվերնագիր» բանաստեղծության ընծայականը:
2. Բանաստեղծության մեջ օգտագործված բառերի ազատությունը:
3. Չարենցի «Անվերնագիր» բանաստեղծությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. Հիշել Իզաբելայի անունը:
2. Բացատրել *աղետ, համր, այրի, դժնի, անհաղորդ, տարտամ, ուրվակյան* բառերի իմաստը տեքստից դուրս և տեքստում:
3. Մեկնաբանել սեփական զգացողությունները բանաստեղծությունը կարդալուց հետո:

## Դաս 55. Դերենիկ Դեմիրճյան. կյանքը և ստեղծագործությունը

### Թեմատիկ պլանավորում

#### **Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար**

1. Որտե՞ղ է ծնվել Դ. Դեմիրճյանը:
2. Թիֆլիսում գործող n՞ր նշանավոր գրական խմբակի անդամ է եղել Դեմիրճյանը:
3. Դեմիրճյանի հատկապես n՞ր պատմվածքը մեծ ուշադրության արժանացավ:
4. Ժողովրդական հեքիաթների n՞ր հայտնի հերոսին ենք հանդիպում և՛ Թումանյանի, և՛ Դեմիրճյանի ստեղծագործություններում:
  - a. ա. Բնութագրե՛ք այդ հերոսին:
5. Ո՞ր վեպն է համարվում Դեմիրճյանի գլուխգործոցը:

#### **Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Դեմիրճյանի ծննդավայրը:
2. Գրողի՝ «Վերնատան» անդամ լինելը:
3. «Ավելորդը» պատմվածքի վերնագիրը:
4. Դեմիրճյանի «Քաջ Նազար» կատակերգության վերնագիրը:
5. «Վարդանանք» պատմավեպը՝ որպես Դեմիրճյանի գլուխգործոց:

#### **Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. Նշել Դեմիրճյանի ծննդավայրը:
2. Անվանել գրական խմբակը:
3. Մտապահել «Ավելորդը»՝ որպես նշանավոր պատմվածք:
4. Հիշել կատակերգության վերնագիրը:
5. Շեշտել «Վարդանանքը»՝ որպես Դեմիրճյանի գլուխգործոց:

## Դաս 56. «Վարդանանք». ստեղծման պատմական նախադրյալները

### Թեմատիկ պլանավորում

Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար

1. Ե՞րբ է գրվել պատմավեպը:
2. Դեմիքճյանը ո՞ր պատերազմի պատճառով որոշեց առաջնահերթ «Վարդանանքը» գրել:
3. Ինչպե՞ս էր Դեմիքճյանը պատրաստվում՝ գրելու «Վարդանանքը»:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա

1. Վեպի գրության ժամանակը:
2. «Վարդանանքի» և Հայրենական պատերազմի առնչությունը:
3. Գրողի՝ հայ և օտարադրյուրների հետագոտելը:

Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա

1. Հիշել վեպի ստեղծման ժամանակաշրջանը:
2. Մտապահել Հայրենական պատերազմի և վեպի կապը:
3. Պատկերացնել պատմավեպ գրելու կարևոր սկզբունքներից մեկը:

**Դաս 57. «Վարդանանքի» բովանդակությունը [Թեմատիկ պլանավորում](#)**

**Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար**

1. Ո՞ր դարի դեպքերն են արտացոլված «Վարդանանք» պատմավեպում:
2. Ի՞նչ էր պահանջում հայերից պարսից Հազկերտ արքան:
3. Հայ իշխանները Պարսկաստանում ի՞նչ ծանր քայլի են գնում:
4. Ո՞ր թվականին է տեղի ունեցել «Ավարայրի» ճակատամարտը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Վեպում պատկերված դեպքերի ժամանակաշրջանը:
2. Կրոնափոխության պահանջը Հազկերտի կողմից:
3. Հայ իշխանների առերես կրոնափոխ լինելը:
4. «Ավարայրի» ճակատամարտի տարեթիվը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. Նշել վեպում պատկերված դեպքերի ժամանակաշրջանը:
2. Ներկայացնել նամակի (հրովարտակի) հիմնական ասելիքը:
3. Մտապահել կրոնափոխ լինելու դրվագը:
4. Հիշել ճակատամարտի տարեթիվը:

**Դաս 58. Վեպի կերպարները. Վարդան**[Թեմատիկ պլանավորում](#)

**Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար**

1. Ո՞վ է վեպի գլխավոր հերոսը:
2. Հանուն ինչի՞ էր պայքարում Վարդանը:
3. Հայ իշխաններից ո՞վ էր Վարդանի հակառակորդը:
4. Մարդկային ի՞նչ արժանիքների կրող է Վարդանը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Վարդանի կերպարի առանցքային նշանակությունը վեպում:
2. Նրա պայքարի նպատակը:
3. Վարդանի և Վասակի հակադրությունը:
4. Վարդանի արժանապատիվ և ազատասեր էությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. Հիշել Վարդանի անունը՝ որպես վեպի գլխավոր հերոսի:
2. Բացատրել նրա պայքարի նպատակը:
3. Ընդգծել Վարդան - Վասակի հակադրությունը:
4. Բնութագրել Վարդանին:



**Դաս 59. Վասակի կերպարը**[Թեմատիկ պլանավորում](#)

**Հարցեր՝ սովորողներին ներկայացվողնվագագույնպահանջներիստուգմանհամար**

1. Ինչպիսի՞ն է Վասակ Սյունին՝ ըստ Եղիշեի:
2. Վասակն ինչպիսի՞ թաքուն միտք է փայփայում իր հայրենիքի համար:
3. Վասակն ինչպե՞ս է վերաբերվում իր նպատակներին:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Եղիշեի՝ Վասակին խիստ բացասական գծերով ներկայացնելը:
2. Վասակի՝ Հայաստանը պարսիկներից և հույներից այլ միջոցներով ազատելու ցանկությունը:
3. Վասակի՝ նպատակին հասնելու համար միջոցների մեջ տարբերություն չդնելը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. Հիշել, թե ինչպիսին է Վասակը Եղիշեի երկի մեջ:
2. Նկարագրել Հայաստանի փրկությունը՝ ըստ Վասակի:
3. Ներկայացնել այն, թե ինչպես էր Վասակը վերաբերվում իր նպատակներին:

**Դաս 60. Հազկերտի կերպարը: Պատմավեպի ժանրային առանձնահատկությունները**

**Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար**

1. Ի՞նչ հատկանիշներ ունի Հազկերտը:
2. Ինչո՞վ է պատմավեպը տարբերվում ժամանակակից կյանքը պատկերող վեպից:
3. Հայ հեղինակներից ովքե՞ր են պատմավեպեր գրել:
4. Ո՞ր դեպքերն են պատմավեպի նյութ դառնում:

*Մերօրյա հերոսներից ու՞մ մասին կարելի է պատմավեպ գրել:*

*Ի՞նչ պատմավեպեր գիտեք:*

*Հայոց պատմության ո՞ր հերոսն է ձեզ համար սիրելի:*

*ա. Պատմե՛ք նրա մասին:*

*Ի՞նչ է հայրենասիրությունը քո կարծիքով:*

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Հազկերտի դաժան և խորամանկ լինելը:
2. Պատմավեպի՝ անցյալի օրինակով ժամանակակից խնդիրներ լուծելու նպատակը:
3. Առնվազն մեկ հայ պատմավիպասանի անուն:
4. Պատմավեպի՝ ժողովրդի համար ճակատագրական դեպքերին անդրադառնալը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Բնութագրել** Հազկերտին՝ որպես դաժան և խորամանկ մարդու:
2. **Բացատրել** պատմավեպերի նշանակությունը ժամանակակից կյանքի համար:
3. **Անվանել** առնվազն մեկ հայ պատմավիպասանի:
4. **Ներկայացնել** այն, թե ինչպիսի դեպքերն են պատմավեպի նյութ դառնում:

## **Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար**

1. Որտե՞ղ է ծնվել Ակսել Բակունցը:
2. Ո՞րն է Բակունցի առաջին ժողովածուն:
3. Ի՞նչ կապ ունեն նրա հերոսները բնության հետ:
4. Հայ ո՞ր գրողի մասին է Բակունցը վեպ գրել:
5. Ինչպե՞ս է ավարտվել գրողի կյանքը:

## **Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Բակունցի ծննդավայրը:
2. «Մթնաձոր» ժողովածուն:
3. Մարդու և բնության միասնությունը նրա ստեղծագործության մեջ:
4. Բակունցի՝ Խաչատուր Աբովյանի մասին վեպ գրելը:
5. Գրողի՝ ստալինյան բռնաճնշման զոհ դառնալը:

## **Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Անվանել** Բակունցի ծննդավայրը:
2. **Հիշել** ժողովածուի վերնագիրը:
3. **Նկարագրել** Բակունցի հերոսի և բնության կապը:
4. **Մտապահել** Բակունցի՝ Խաչատուր Աբովյանի մասին գրած վեպը:
5. **Ներկայացնել** Բակունցի կյանքի վերջաբանը:

## **Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար**

1. Ո՞ր բերդի նկարագրությամբ է Բակունցն սկսում պատմվածքը:
2. Ի՞նչ մասնագիտություն ունեին պատմվածքի երկու գլխավոր հերոսները:
3. Նրանք ու՞մ հյուրընկալվեցին:
4. Ինչպիսի՞ն էր պատմվածքի հերոսուհու և ընդհանրապես հայ գյուղացու կյանքը:
5. Ինչպե՞ս է ավարտվում «Ալպիական մանուշակը»:

## **Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Բերդի անվանումը:
2. Երկու հերոսների մասնագիտությունը:
3. Հերոսների՝ կնոջը հանդիպելը:
4. Կնոջ և ընդհանրապես հայ գյուղացու ծանր վիճակը:
5. Ամուսնու՝ կնոջը մահակով հարվածելը:

## **Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. Անվանել բերդը:
2. Հիշել, որ հերոսներից մեկը նկարիչ է, մյուսը՝ հնագետ:
3. Մտապահել եկվորների և կնոջ հանդիպումը:
4. Նկարագրել գյուղացիների աղքատությունը:
5. Հիշել ամուսնու՝ կնոջը հարվածելու դրվագը:

**Դաս 63. «Ծիրանի փողը»[Թեմատիկ պլանավորում](#)**

**Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար**

1. Որտեղի՞ց էին գաղթել պատմվածքի հերոսները:
2. Սասունցիներն ինչու՞ էին նոր բնակավայրում հաստատվել:
3. Ո՞վ է պատմվածքի գլխավոր հերոսը:
4. Հազրոն ու՞մ է պատրաստվում տալ իր ծիրանի փողը:

**1. Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Հերոսների՝ սասունցի լինելը:
2. Ձյանբերդում ապրող սասունցիների՝ Եղեռնից մի կերպ փրկվելը:
3. Հազրոյի՝ պատմվածքի գլխավոր հերոս լինելը:
4. Հերոսի՝ ծիրանի փողը թոռնիկին փոխանցելու ցանկությունը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. Մտապահել հերոսների սասունցի լինելը:
2. Պատկերացնել հերոսների՝ Եղեռնից փրկվելը:
3. Հիշել Հազրոյին՝ որպես գլխավոր հերոսի:
4. Ներկայացնել Հազրոյի՝ ծիրանի փողն իր թոռնիկին փոխանցելու մտադրությունը:

**Դաս 64. «Միրհավ»[Թեմատիկ պլանավորում](#)**

**Հարցեր՝ սովորողներին ներկայացվող նվազագույն պահանջների ստուգման համար**

1. Ի՞նչ է միրհավը:
2. Ո՞վ է պատմվածքի հերոսը:
3. Ու՞մ էր հիշում նա:
4. Արդյո՞ք սիրելիի հետ ամուսնացավ Սոնան:
5. Ամուսնությունից հետո Սոնան որտե՞ղ հանդիպեց Դիլանին:
6. Ի՞նչ ճակատագիր ունեցավ Սոնան:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է իմանա**

1. Ինչպիսի թռչուն է միրհավը:
2. Պատմվածքի հերոսի անունը:
3. Դիլանի՝ Սոնային հիշելը:
4. Սոնայի՝ ուրիշի հետ ամուսնանալը:
5. Սոնայի և Դիլանի հանդիպումը:
6. Նորահարս Սոնայի մահը:

**Հարցերին պատասխանելու կամ առաջադրանքները կատարելու համար սովորողը պետք է կարողանա**

1. **Տարբերակել** միրհավը այլ թռչուններից:
2. **Հիշել** հերոսի անունը:
3. **Նկարագրել** Դիլանի՝ Սոնայի հանդեպ ունեցած սերը:
4. **Ներկայացնել** Սոնայի և Դիլանի միասին չլինելու պատճառը:
5. **Վերհիշել**, թե ինչպես և որտեղ հանդիպեցին Սոնան ու Դիլանը:
6. **Հիշել** Սոնայի մահվան պատճառը:

Հաստատում եմ՝

Հ. Մանուկյանի անվ. միջն. դպրոցի տնօրեն

<< *սեպտեմբեր* >> 2022 թ.



Ս.Սահակյան

Կոտայքի մարզի Հացավանի

Հ. Մանուկյանի անվան միջնակարգ դպրոց

Թեմատիկ պլանավորում

2022-2023 ուս. տարի

Առարկա- Հայ գրականություն

Ուսուցիչ- Ս. Սեդրակյան

Դասարան- 12-րդ

Առաջին կիսամյակ -15 շաբաթ

Շաբաթական 3 ժամ, ընդամենը՝ 45

Թեմատիկ պլանավորում

XII դասարան

Հայ գրականություն

I կիսամյակ

(շաբաթական 3 ժամ, ընդամենը՝ 45 )

Դասագրքի հեղինակ՝ Ա. Եղիազարյան, տարեթիվ՝ 2016

N	Ուսուցանվող թեմաները	Դ / Ժ	Տնային աշխատանք
1	Գուրգեն Մահարու կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը	1	Հեղինակի մասին կենսագր. նյութի համակարգում էջ 3-7, պատմել
2	«Ծաղկած փշալարեր» վիպակը	1	էջ 8-9 կարդալ, պատմել,
3	«Ծաղկած փշալարեր» վիպակը	1	պատմել վիպակի սյուժեն , բովանդակությունը, վերլուծել
4	«Այրվող այգեստաններ» Վեպր: Ծննդավայրի պատկերները	1	էջ 10- 15 պատմել վիպակի սյուժեն և բովանդակությունը:
5	Նաիրի Զարյանի կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը	1	Հեղինակի մասին կենսագր. նյութի համակարգում էջ 18-24, պատմել
6	«Արա Գեղեցիկ և Շամիրամ»	1	էջ 24 – 28 պատմել, վերլուծել դրաման
7	Ասք Անդրանիկ գորավարի», «Զրույց մեռած բանաստեղծի հետ»:	1	էջ 28 – 34 պատմել ստեղծագործությունների բովանդակությունը, գաղափարական առանձնակատկությունը
8	Կոստան Զարյանի կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը:	1	Հեղինակի մասին կենսագր. նյութի համակարգում էջ 37- 41, պատմել
9	Նավը լեռան վրա» վեպը:	1	էջ 42- 47 պատմել
10	Նավը լեռան վրա» վեպը:	1	էջ 42- 47 պատմել , վերլուծել



11	Շահան Շահնուրի կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը	1	Հեղինակի մասին կենսագր. նյութի համակարգում էջ 49- 50, պատմել
12	«Նահանջը առանց երգի»	1	էջ 51- 56 պատմել, վերլուծել
13	«Նահանջը առանց երգի»	1	Ներկայացնել գաղափարական առանձնահատկությունները
14	Վեպի կերպարները: Ուժացման /ձուլման/ գաղափարի ընկալումը	1	Վերլուծել և ներկայացնել հերոսներին: Ճիշտ ներկայացնել ժամանակի խնդիրը:
15	Թեմայի ամփոփում	1	
16	<b>Թեմատիկ աշխատանք 1</b>	1	
17	Հովհաննես Շիրազի կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը:	1	Հեղինակի մասին կենսագր. նյութի համակարգում էջ 58- 60, պատմել
18	«Միամանթո և Խջեզարե» պոեմը	1	էջ 60- 61 ներկայացնել պոեմը
19	Մոր կերպարը Շիրազի պոեզիայում	1	էջ 61-62 պատմել, անգիր սովորել <<Մայրս>> բանաստեղծությունը և վերլուծել:
20	Հայրենիքի երգը	1	էջ 63-67 պատմել, անգիր սովորել նախընտրած բանաստեղծությունը և վերլուծել:
21	«Բիբլիական» պոեմը: Արվեստը	1	էջ 67- 70 պատմել պոեմի պյուժեն, սովորել անգիր/հատված/, վերլուծել
22	Ամփոփում	1	
23	Համո Սահյանի կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը:	1	Հեղինակի մասին կենսագր. նյութի համակարգում էջ 72- 77, պատմել
24	Բնությունը և մարդը:	1	էջ 72- 77 պատմել
25	Մանկությունը:Արվեստը	1	էջ 77- 82 պատմել
26	<b>Թեմատիկ գրավոր աշխատանք 2</b>	1	

27	Պարույր Սևակի կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը	1	Հեղինակի մասին կենսագր. նյութի համակարգում էջ 84- 85, պատմել
28	«Մարդը ափի մեջ» ժողովածուն	1	էջ 84- 85 պատմել
29	«Մարդը ափի մեջ» ժողովածուն	1	Ժողովածուից ընտրությամբ սովորել անգիր, վերլուծել
30	«Եղիցի լույս» ժողովածուն	1	էջ 88- 91 պատմել, ժողովածուից ընտրությամբ սովորել անգիր, վերլուծել
31	«Անլռելի զանգակատուն» պոեմը	1	էջ 91- 94 պատմել, սովորել անգիր/ հատված/, վերլուծել
32	«Եվ այր մի՝ Մաշտոց անուն...» պոեմը	1	էջ 95- 98 պատմել, վերլուծել
33	Հրանտ Մաթևոսյանի կյանքը և ստեղծագործության ընդհանուր բնութագիրը: Մաթևոսյանի արձակի լեզվաոճական առանձնահատկությունները	1	Հեղինակի մասին կենսագր. նյութի համակարգում էջ 101-102, պատմել
34	Պատմվածքները, վիպակները	1	էջ 102-107 պատմել
35	«Աշնան արևը» վիպակ	1	էջ 108-114 պատմել
36	«Աշնան արևը» վիպակ	1	Վերլուծել վիպակի կերպարները
37	<b>Թեմատիկ գրավոր աշխատանք</b>	1	
38	Նորագույն շրջանի հայ բանաստեղծներ (ընդհանուր ակնարկ)՝ Մարո Մարգարյան, Գևորգ Էմին, Սիլվա Կապուտիկյան, Վահագն Դավթյան, Ռազմիկ Դավոյան և ուրիշներ:	1	էջ 116-134 հեղինակների մասին կենսագր. նյութի համակարգում, պատմել
39	Նորագույն շրջանի հայ արձակագիրներ(ընդհանուր ակնարկ)՝ Լեո Կամսար, Մկրտիչ Արմեն, Վախթանգ Անանյան, Խաչիկ Դաշտենց, Սերո Խանգադյան, Աղասի Այվազյան, Մուշեղ Գալշոյան, Լևոն Խեչոյան և ուրիշներ:	1	էջ 126-134 բանաստեղծությունները կարդալ, վերլուծել
40	Նորագույն շրջանի հայ արձակագիրներ (ընդհանուր ակնարկ)՝ Մտ. Զորյան, Լեո Կամսար, Մկրտիչ Արմեն, Վախթանգ Անանյան,	1	էջ 135- 148 հեղինակների մասին կենսագր. նյութի համակարգում,

	Խաչիկ Դաշտենց, Սերո Խանգադյան, Աղասի Այվազյան, Մուշեղ Գալշոյան, Լևոն Խեչոյան և ուրիշներ:		պատմել, վերլուծել
41	XX դարի սփյուռքահայ գրողներ (ընդհանուր ակնարկ)՝ Վահան Թեքեյան, Համաստեղ, Հակոբ Օշական, Հակոբ Մնձուրի, Հակոբ Կարապենց, Վազգեն Շուշանյան, Մուշեղ Իշխան և ուրիշներ:	1	Էջ 149- 156 հեղինակների մասին կենսագր. նյութի համակարգում, պատմել, վերլուծել
42	XX դարի սփյուռքահայ գրողներ (ընդհանուր ակնարկ)՝ Վահան Թեքեյան, Համաստեղ, Հակոբ Օշական, Հակոբ Մնձուրի, Հակոբ Կարապենց, Վազգեն Շուշանյան, Մուշեղ Իշխան և ուրիշներ:	1	Էջ 157- 161 հեղինակների մասին կենսագր. նյութի համակարգում, պատմել, վերլուծել
43	XX դարի օտարագիր հայ գրողներ (ընդհանուր ակնարկ)՝ Վիլյամ Մարոյան, Լևոն-Զավեն Սյուրմեյան, Վահե Քաչա, Մայքլ Արլեն Կրտսեր, Մուշեղ Իշխան և ուրիշներ:	1	Էջ 162- 168 հեղինակների մասին կենսագր. նյութի համակարգում, պատմել, վերլուծել
44	Անցած նյութի կրկնություն	1	
45	<b>Ամփոփիչ աշխատանք</b>	1	